ԴՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ, Հ. V. Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1974, 732 էջ:

Հայկական ՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի հրատարակած Հայ ժողովրդի պատմության բազմահատորյակի V հատորը ընդգրկում է 1801—1870 թվականները։ Հայաստանի պատմության բեմահարթակին այդ ժամանակաշրջանը ներկայանում է տնտեսական-սոցիալական նոր տեղաշարժերով, հայության հասարակական-քաղաքական և հոգևոր կյանքի բուռն ու բարդ ընթացքով, նրա պատմական բախտի և զարգացման հեռանկարների տեսակետից նշանակալի, շրջադարձային անցքերով։

Հատորի հեղինակային կոլեկտիվը և խմբագրական կոլեգիան մեծ ու շնորհակալ աշխատանք են կատարել՝ համակողմանի, գիտական խորը վերլուծությամբ տալով հայ ժողովրդի պատմության քննվող ժամանակաշրջանի ամբողջական, կուռ շարադրանքը։*

Հատորի Ա բաժինը լուսաբանում է պարսկական և թուրքական դարավոր բռնատիրությունների լուծը կրող Հայաստանի սոցիալ-տնտեսական և վարչա-քաղաքական դրությունը XIX դ. սկզբին։

Բաժնի առաջին գլխում (հեղինակ՝ Վ. Ա. Դիլոյան) հանգամանորեն բնութագրվում են Արևելյան Հայաստանի, երկրորդ գլխում (հեղինակ՝ Հ. Մ. Ղազարյան)՝ Արևմտյան Հայաստանի ազգարային հարաբերություններն ու սոցիալական կարգն իրենց առանձնահատուկ կողմերով։ Ընթերցողը որոշակի պատկերացում է ստանում հողատիրության ձևերի, արտադրության տարբեր ճյուղերի զարգացման մակարդակի, քաղաքային կյանքի, առևտրի վիճակի և հարկային սիստեմի մասին։

Քննարկումը, որն իրավամբ կատարվում է հիմնական արտադրողների դրության տեսանկյունից, ակներև է դարձնում հայ աշխատավորներին ուժասպառության հասցնող ֆեոդալական շահագործման անտանելի բեռը՝ թանձրացած ազգային-կրոնական բիրտ հալածանքներով, մոլեգնող անօրինականությամբ, բնակչության հաճախադեպ բռնի տեղահանումներով։ Նույն տեսանկյունից կարևոր է այն պնդումը, որ տիրապետող հետամնաց արտադրահարաբերությունները և արտադրամիջոցների բարելավման մտահոգությունից հեռու կառավարություններն իրենց վարչանով արգելակում էին անտեսական-սոցիալական առաջընթացը Պարսկաստանում և Թուրքիայում։ Այս կապակցությամբ, փաստարկման կոնկրետ ֆոնի վրա, անշուշտ առավել սպառիչ ու դիպուկ կհնչեր Կ. Մարքսի համապարփակ միտքը արտադրող գյուղական համայնքի անփոփոխ անտեսական հիմքի, նրան հենված արևելյան բռնապետության և ընդհանրապես «հասարակական այն կացության» մասին, որը «լճացել, անշարժության է մատնվել» Ասիայում[1]։

Այլ հանգամանքների կողքին (որոնք տարբեր առիթներով ու ձևակերպումներով նշվում են գրքում), հարյուրամյակներ շարունակ, մասնավորապես այդ կացության «հարմար պատվանդան էր ծառայում» գերակշռող արդյունքավճար ռենտան։ Սրա ծավալը, ինչպես կարելի է պատկերացնել նաև հեղինակների բերած ընդհանուր նյութից, այստեղ «անհնարին էր դարձնում արտադրության ընդլայնումը և անմիջական արտադրողներին հարկադրում էր բավականանալու կենսամիջոցների ֆիզիկական մինիմումով»[2]։ Այս առումով, հանգամանորեն լուսաբանված ռեն-

---

* *Պատասխանատու խմբագիր՝ Հայկական ՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Ե. Պ. Աղայան, պատասխանատու խմբագրի տեղակալ՝ պրոֆեսոր Հ. Մ. Ղազարյան, խմբագրական կոլեգիայի անդամներ՝ Հայկական ՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Մ. Գ. Նեբսիսյան, պրոֆեսորներ Ջ. Տ. Գրիգորյան, Վ. Ա. Ավետիսյան, դոցենտ Վ. Ա. Դիլոյան։*

1 Կ. Մարքս, Կապիտալ, հ. 3, Երևան, 1949, էջ 334—335, նաև Նամակներ «Կապիտալի» մասին, Երևան, 1954, էջ 56—58։

2 Կ. Մարքս, Կապիտալ, հ. 3, էջ 335։

տայի ձևերից, տեսակներից ու հարաբերական չափերից բացի, տեղին կլիներ առանձնապես արևելահայ գյուղացիության շահագործման աստիճանի քիչ թե շատ կոնկրետ տնտեսագիտական արծարծումը՝ հենվելով պարսից տիրապետության վերջին շրջանի վերաբերյալ մեր որոշ հետազոտողների մերձավոր հաշվարկներին։

Սակայն Պարսկաստանում և Թուրքիայում արտադրողական ուժերի ցածր մակարդակը և աշխատավորության կենսամիջոցների ֆիզիկական մինիմումը համընդհանուր էին։ Սույն գլուխներում ցույց է տրվում, որ դրա հետ մեկտեղ, պարբերական ավերածություններ, կողոպուտ ու գերեվարություն բերող քաղաքական երերուն իրադրությունն ու ներքին երկպառակությունները, հայերի նկատմամբ կիրառվող ազգահալած քաղաքականությունը (որը պարարտ հող ուներ իրավադուրկ քրիստոնյա այլազգիների դեմ սրված մահմեդական մոլեռանդության միջավայրում), անձի, գույքի, երթեկի անվտանգության բացակայությունը սպառնում էին հայության բուն իսկ գոյատևմանը։ Արևելահայերի համար ստեղծված դժոխային պայմանների նկարագիրը վերջանում է փաստերով արդարացված այն եզրակացությամբ, թե «Այն ժամանակամիջոցում հասունացող արտաքին քաղաքական իրադարձություններն ինքնըստինքյան թելադրում էին, որ արդեն Անդրկովկասում հիմնավորված ռուսական զենքն է, որ պետք է աղատի նրանց այդ ծանր վիճակից» (էջ 60)։

Կարևոր է այն հարցի պատասխանը, թե ինչու արևմտահայերի իրավազրկությունը առավել դաժան կերպարանք ստացավ XVIII դ. վերջին և XIX դ. առաջին քառորդին։ Քաղաքական և անտեսական խոր ճգնաժամ ապրող Թուրքիան, նշվում է գրքում, նոր երկրներ նվաճելու փորձերի մեջ սանձահարված Եվրոպայի և Ռուսաստանի զորեղ դիմադրությամբ, այժմ գերադասում էր ամրապնդել ձեռք բերածը՝ կայսրության այլահավատ հպատակներին համաձուլելու, նրանց ազգային շարժումները արյան մեջ խեղդելու եղանակով (էջ 106—107)։ Ճնշված ժողովուրդները դիմակայում էին, նետվում ազատագրական պայքարի հրապարակ։

Հատորի Բ բաժինը (Զ. Տ. Գրիգորյան) լուսաբանում է հայ ժողովրդի համար բախտորոշ, առաջադիմական մեծ նշանակություն ունեցող իրադարձության՝ Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միացման պատմությունը և ընդգրկում է 1801—1829 թթ.։

Համակողմանի բացահայտելով Մերձավոր Արևելքում և Անդրկովկասում մեծ տերությունների շահերի բախումը և ընդգծելով անդրկովկասյան ժողովուրդների ազատագրական ձգտումները, հեղինակը ցույց է տալիս Ռուսաստանի հետ Անդրկովկասի միացման համար ստեղծված նպաստավոր իրադրությունը XIX դ. շեմին։ Ցարիզմը չհապաղեց օգտագործելու այն, իսկ հայ ժողովուրդը, ավելի ոգևորված Ռուսաստանի հետ Վրաստանի միացմամբ, թուրքական և պարսկական լծից իր փրկության ուսալ հնարավորությունը կապեց ռուսական զենքի հաղթանակի հետ։ Միանգամայն հիմնավոր է այն պնդումը, որ ռուս-պարսկական և ռուս-թուրքական պատերազմների ժամանակ ռուսական բանակին հայերի ցույց տված գործուն օգնությունը (որը մանրամասն փաստարկվում է), «պետք է դիտել որպես հայ ժողովրդի ազատագրական շարժման արտահայտություններից մեկը» (էջ 131)։

Բաժնի երեք գլուխներում պարզաբանված են 1804—1813 թթ., 1826—1828 թթ. ռուս-պարսկական և 1828—1829 թթ. ռուս-թուրքական պատերազմների դրդապատճառներն ու ընթացքը։

Հայ և ռուս ժողովուրդների մարտական համագործակցության, հայերի նկատմամբ առաջադիմական Ռուսաստանի համակրանքի և օգնության անմիջական դրսևորումներից էր Կովկասյան կորպուսում ծառայող աքսորական դեկաբրիստների ակտիվ մասնակցությունը կռիվներին։ Գաղութակալական նպատակներ հետապնդող ցարիզմի մղած պատերազմները նրանցից շատերը «դիտում էին որպես միջոց՝ հայ ժողովրդին ազատագրելու թուրքական և պարսկական լծից» (էջ 163)։

Առանձին պատկերավորությամբ է նկարագրված ու մեկնաբանված հայ ժողովրդի համընդհանուր ցնծությունը պարսկական շղթաներից Երևանի ազատագրման առթիվ։

Բաժնի վեցերորդ ենթագլխում տրված է Թուրքմենչայի պայմանագրի գնահատականը։ Այն հաստատելով Հայաստանի միացումը Ռուսաստանին, նշանավորեց հայ ժողովրդի պատմական զարգացման նոր հեռանկարի սկիզբը։ Պայմանագրի կենսագործման առաջին խոշոր քայլը հայերի ներգաղթն էր։

Արևմտահայերի հարցը սերտ առնչված մնաց արևմտյան տերությունների նվաճողական ծրագրերին, որոնք այդ ժամանակից ի վեր հայերի ճակատագիրը թողնելով թուրքական արյունոտ դահճասեղանին՝ հայ ժողովրդի մեծ ողբերգության պատճառ դարձան։

Բաժնի վերջին ենթագլխում բաղմակողմանի գնահատված է Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միացման նշանակությունը։ Այդ ակտի արժեքավորման ելակետը իրավացիորեն համարելով հայ ժողովրդի գոյատևման հարցը, հեղինակը ընդգծում է, որ դրանով արևելահայերը փրկվեցին ֆիզիկական բնաջնջումից, ինչպես նաև նպաստավոր պայմաններ ստեղծվեցին նայ ժողովրդի ազգաճավաքման համար։

Նոր պատմաշրջանում քայլելով ռուս մեծ ժողովրդի հետ, հայ ժողովուրդը հասարակական զարգացման հնարավորություն ստացավ։ Ազատագրական և հեղափոխական շարժումների նոր շրջափուլ մտնող Ռուսաստանի կազմում նա հաղորդակից էր լինելու առաջադեմ դեմոկրատական մտքին և իր մասնակցությունը բերելով ծավալվող քաղաքական պայքարին՝ այնուհետև Ռուսաստանի մյուս ժողովուրդների հետ բռնելու էր սոցիալական ու ազգային իրական ազատագրության ուղին։

1830—1860-ական թվականները ընդգրկող Գ բաժնի առաջին երկու գլուխներում (Վ. Ա. Դիլոյան, Վ. Հ. Ռշտունի) քննվում են Արևելյան Հայաստանի նորահաստատ վարչակարգն իր փոփոխություններով, հայ եկեղեցու «բարենորոգության» խնդիրը, նրա «Պոլոժենիե»-ի հանդես գալու հանգամանքներն ու էությունը, հողատիրական «բարձր դասի» իրավունքների «ճշտորոշման» և ընդլայնման ընթացքը։ Այս հարցերի պարզաբանմամբ բացահայտվում են կայսրության քաղաքական դիտավորություններն Անդրկովկասում, իր գաղութատիրական դիրքերի ամրապնդման համար այստեղ հավատարիմ սոցիալական հենարան ստեղծելու ցարիզմի ձգտումը։

Փաստական հարուստ նյութի վերլուծությամբ լուսաբանվում են Արևելյան Հայաստանի տնտեսական կյանքի զարգացման նպաստավոր պայմաններն ու գործոնները։ Նոր տեղաշարժերի հետևանքով ընտանտեսությունը դանդաղ, բայց անխուսափելիորեն զիջում էր իր դիրքերը։ Ապրանքադրամական հարաբերությունների զարգացմամբ փոխվում էր երկրի նախկին ֆեոդալական դեմքը։ Դրան զուգընթաց սրվում էին դասակարգային ներհակությունները։ Ըստ ամենայնի ներկայացված և գնահատված է շահագործման ու ցարիզմի սոցիալական քաղաքականության դեմ ծավալված աշխատավորության պայքարը՝ բնորոշ գծերով ու արդյունքներով։

Ցարական կառավարությունը որոշ քայլեր կատարեց երկրամասի տնտեսության օգտաբեր ճյուղերում, հատկապես առևտրի մեջ ռուսական կապիտալի դիրքերն ամրացնելու համար։ Այնուամենայնիվ, ինչպես ճիշտ կերպով նշվում է երկրորդ գլխի եզրափակիչ մասում, Կովկասի և Անդրկովկասի տնտեսական նվաճումը ռուսական բուրժուազիայի կողմից տեղի ունեցավ միայն հետոեֆորմյան տարիներին (էջ 272)։ Սակայն, մեր կարծիքով, Վ. Ի. Լենինի այս միտքը տվյալ կապի մեջ պետք է ստանար ավելի հստակ մեկնաբանություն։ Բանը միայն այն չէ, որ Անդրկովկասում ռուսական կապիտալի համար ձեռնտու պայմաններ ստեղծելու ճանապարհին ցարական կառավարությունը մեծ դժվարությունների հանդիպեց այստեղ բավական մեծ դեր խաղացող եվրոպական կապիտալի հետ մրցելիս (էջ 272)։ Եվ միակողմանի կլիներ դրանից հետո եզրակացնել, թե «Այսպիսով, մինչռեֆորմյան տարիներին ռուսական կապիտալին չհաջողվեց ամբողջովին տիրանալ անդրկովկասյան շուկային»։ Պարզորոշ պետք է նշվեր, որ կառավարության ձեռնարկումների մասշտաբը, նրանց հաջողությունը, մրցակցության այս կամ այն ելքը մեծապես պայմանավորված էր հենց Ռուսաստանում կապիտալիզմի զարգացման ընթացքով։ Իսկ նրա զարգացումը լայնորյամբ կամ տիրապետության ոլորտների ընդլայնումը, որպես կապիտալիզմի «առանձնահատկություն վիթխարի ուժով երևան է եկել ու շարունակում է հանդես գալ հետոեֆորմյան Ռուսաստանում»[3]։

Այս բաժնի երրորդ գլխում (Հ. Մ. Ղազարյան) վերլուծելով Թուրքիայում կատարված ռեֆորմների դրդապատճառներն ու էությունը, վարչաձևի փոփոխություններն ու հողատիրության ձևերի որոշ վերափոխումը, հեղինակը եզրակացնում է, որ երկրի սոցիալ-տնտեսական և քաղաքական կյանքում դրանք էական փոփոխություններ չմտցրին։ Չնայած որոշ տեղաշարժերին, Թուրքիայի տնտեսությանը բնորոշ էին ընդհանուր հետամնացությունն ու կիսագաղութային կախումը եվրոպական կապիտալից։ Այս հանգամանքների հաշվառումով են քննվում Արևմտյան Հայաստանի տնտեսության և աշխատավորության վիճակը, պոլսահայերի կյանքի հիմնական կողմերը։ Ցույց են տրվում Կ. Պոլսի հայ ազգաբնակչության սոցիալական կազմը, տարբեր հասարակախավերի շահերի բախումները։ Նշվում է, որ դրանց հետևանքով արևմտահայերի կյանքի կոչված Ազգային սահմանադրությունը սուլթանական բռնապետության մեջ հայ ժողովրդի իրավունքների պաշտպանության տեսակետից արժեք չէր ներկայացնում, բայց սահմանադրական

---

3 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 3, էջ 772։

շարժումը լական դեր խաղաց «արևմտահայերի ազատագրական պայքարի գաղափարաբանական կազմակերպման տեսակետից» (էջ 338)։

Բաժնի ենթագլուխներից մեկը (Ա. Մ. Պողոսյան) վերաբերում է Ղրիմի պատերազմի Կովկասյան ռազմաճակատին, ռուսական բանակին հայերի ցույց տված օգնությանը։ Նշվում է, որ պատերազմի ժամանակ ե նրանից հետո ուժեղացան Ռուսաստանի օգնությամբ սուլթանական լուծը թոթափելու արևմտահայերի ակնկալությունները։

Հատորի Դ բաժնում լուսաբանվում է 1850—1860-ական թվականների հայ ազգային-ազատագրական շարժումների և հասարակական-քաղաքական հոսանքների պատմությունը։

Հայ ժողովրդի ազատագրական պայքարի զարթոնքը սկսվեց ղեյթունցիների 1830—1850-ական թվականների ինքնապաշտպանական կռիվներով, Զեյթունի 1862 թ. ապստամբությամբ և Արևմտյան Հայաստանի այլ գավառներում բռնկված ժողովրդական ելույթներով, որոնց ընթացքը, լայն արձագանքն ու նշանակությունը հայ հասարակական կյանքում հանգամանորեն պարզաբանված ու գնահատված են բաժնի առաջին գլխում (Հ. Մ. Ղազարյան)։

Երկրորդ և երրորդ գլուխներում (համապատասխանաբար՝ Հ. Մ. Ղազարյան, Ա. Գ. Հովհաննիսյան) ըստ ամենայնի բնութագրված են հայ իրականության մեջ տեղի ունեցած այն տեղաշարժերը, որոնք պայմանավորեցին XIX դ. 50—60-ական թվականների «դասակարգային հարաբերությունների և շահագրգռությունների բյուրեղացումը, հասարակական-քաղաքական հոսանքների երևան գալը և նրանց սահմանազատումը» (էջ 382)։

Այդ հոսանքների տեղն ու դերը հայության կյանքում գնահատվում է նրանց կազմավորման սոցիալ-դասակարգային հիմքերի, ժողովրդի ազատագրական պայքարի ու հասարակական առաջընթացի կենսական խնդիրներում նրանց դիրքորոշման և գաղափարական բախումների պարզաբանմամբ։ Դրա հետ մեկտեղ, իբրև առաջադիմական հոսանքների գաղափարական ձևավորման և նպատակամղման կարևոր ազդակ նշվում է հայ իրականության մեջ համառուսական և համաեվրոպական հեղափոխական շարժումների լայն արձագանքը։

Հայ մեծ հեղափոխական-դեմոկրատ Մ. Նալբանդյանն ու նրա հետևորդները ջանում էին այդ շարժման հետ կապել արևելահայ և արևմտահայ սոցիալական, ազգային-ազատագրական պայքարը. «դրանով էլ հատկանշվում է հայ դեմոկրատական մտքի մեջ նրանց կատարած սոցիալ-քաղաքական շրջադարձը» (էջ 405)։ Մ. Նալբանդյանի գլխավորած հեղափոխական-դեմոկրատական հոսանքը իրավամբ դիտվում է որպես ռուս հեղափոխական-դեմոկրատական շարժման ցոկատներից մեկը։

Անցյալի գիրկը գնացող ֆեոդալական հետադիմության պաշտպան արևելահայ կղերա-աղայական, արևմտահայ կղերա-ամիրայական հոսանքը կորցնում էր իր ազդեցությունը։ Մինչդեռ ազգային պահպանողականները խուսափում էին ժողովրդական զանգվածային շարժումների քարոզից, իսկ լիբերալ-բուրժուական հոսանքը որդեգրել էր հաշտվողական -ռեֆորմիստական ծրագիր, հեղափոխական դեմոկրատները մարտագրոշ պարզած ցարական ռեակցիայի և սուլթանական բռնատիրության դեմ՝ ձգտում էին հեղափոխական շարժման միջոցով լուծել թե՛ ազգային, թե՛ ագրարային հարցերը։ Բնականաբար մեծ էր նրանց ազդեցությունը ժողովրդական զանգվածների վրա։

Հասարակական-քաղաքական հոսանքների բնութագրմանը զուգընթաց գրքում մանրամասնորեն շարադրված են նրանց արևելահայ և արևմտահայ ներկայացուցիչների գործունեությունն ու պաշտպանած գաղափարները՝ ժամանակի ազգային-քաղաքական հրատապ հարցերի արծարծման առնչությամբ։

Հատորի առաջաբանում, Դ բաժնում (և հետո) ընդգծվում է, որ XIX դ. 50—60-ական թվականներին հայության տնտեսական և հոգևոր առաջընթացի, նրա երկու խոշոր հատվածների մշակութային, գաղափարական-քաղաքական կապերի ուժեղացման, ազգային ուժերի կոնսոլիդացման, հայ բուրժուական ազդի ձևավորման հիմքի վրա նոր թափ ստացած ազգային-ազատագրական շարժումն ընդունեց համազգային ձև և համադեմոկրատական բովանդակություն։ Սա մի կողմից։ Մյուս կողմից՝ քաղաքական հոսանքների պատմությունն ու գնահատականները ընթերցողի առաջ աստիճանաբար և հետևողականորեն պարզում են հասարակական որոշակի ուժերին հենված արևելահայ և արևմտահայ այս կամ այն հոսանքի սոցիալ-դասակարգային և «ծրագրային» էական ընդհանրությունները (չնայած խնդիրների բազմազանությանն ու առանձնահատկություններին)։ Ուստի մեզ թվում է, որ հասարակական հոսանքներից յուրաքանչյուրի զուգահեռ ներկայացումը հատորի տասներորդ գլխի՝ արևելահայերին և արևմտահայերին նվիրված առանձին, ինքնուրույն հատվածներով պատճառաբանված չէ։

Հատորի Ե բաժնում, որը նվիրված է հայկական գաղթավայրերին, պատշաճ տեղ է գտել Ռուսաստանի (Վ. Բ. Բարխուդարյան, Վ. Ա. Խաչատրյան, Ժ. Հ. Անանյան, Վ. Ա. Միքայելյան), Արևելյան Եվրոպայի մի քանի այլ երկրների (Ս. Է. Քոլանջյան, Վ. Ս. Հովնանյան), Պարսկաստանի և Հնդկաստանի (Ա. Գ. Աբրահամյան, Ռ. Ա. Աբրահամյան), Մերձավոր Արևելքի և Աֆրիկայի (Հ. Մ. Ղազարյան, Ռ. Ա. Աբրահամյան, Ա. Գ. Աբրահամյան) բոլոր կարևոր հայ գաղթօջախների տնտեսական, քաղաքական և մշակութային կյանքի 1800—1870 թթ. պատմությունը։ Այն քննվում է մի կողմից հայ հասարակական-քաղաքական մտքի, զիտության և մշակույթի զարգացման գործում, մյուս կողմից՝ հյուրընկալ երկրների հասարակական ընդհանուր զարգացման մեջ հայ գաղթօջախների խաղացած դերի բացահայտման ու գնահատման առումներով։

Բնութագրելով գաղութահայ իրականության մեջ նոր ժամանակների սկզբին տեղի ունեցող փոփոխությունները (կապված կապիտալիստական հարաբերությունների զարգացման, տարբեր երկրների տնտեսական-քաղաքական պայմանների հետ), հեղինակներն ընդգծում են այն մեծ նշանակությունը, որ XIX դ. ստանում էին Մոսկվայի և Պետերբուրգի հայ համայնքները՝ հայ ժողովրդին և Հայաստանին վերաբերող հարցերում։

Հատորի վերջին, Զ բաժնում լուսաբանվում է հայ մշակույթի պատմությունը։ Բաժնի առաջին գլխում (Գ. Խ. Ստեփանյան) XVIII դ. վերջին և XIX դ. արշալույսին հայ իրականության մեջ նկատվող մտավոր աշխուժացումն ու մտավոր շարժման հետագա վերելքը ներկայացվում է մշակութային օջախների գործունեության, լուսավորության, պարբերական մամուլի, հայագիտության զարգացման պատմությամբ։ Բաժնի երկրորդ գլուխը նվիրված է հայ գրականության (Ս. Ն. Սարինյան) և արվեստի (Գ. Խ. Ստեփանյան, Մ. Մ. Ղազարյան, Ա. Մ. Մուրադյան, Վ. Մ. Հարությունյան) զարգացման պատմությանը։ Հանգամանորեն վերլուծված են հայ գրական ուղղություններն ու հոսանքները, ցույց տրված հասարակական համընդհանուր զարգացմամբ պայմանավորված այն նորը, առաջադիմականը, որն անխուսափելիորեն և հաստատ մուտք էր գործում հայ գրականություն, թատերական արվեստ ու կերպարվեստ, սկզբնավորում պրոֆեսիոնալ երաժշտությունը, նպաստում հայ ճարտարապետական մտքի աշխուժացմանը։ Մշակութային զարթոնքն ու 1850—60-ական թվականների բուռն վերելքը իրավամբ գնահատվում է հայության տարբեր հատվածների մտավոր ու քաղաքական մերձեցման, ազգի առաջավոր ուժերի համախմբման, հայ ժողովրդի քաղաքական ինքնագիտակցության ձևավորման և համադեմոկրատական բովանդակություն ունեցող նրա ազատագրական պայքարի տեսանկյունից։

Գիրքը համալրված է անհրաժեշտ քարտեզներով (Ս. Տ. Երեմյան, Հ. Մ. Ղազարյան, Վ. Ա. Դիլոյան), ունի ժամանակագրական տեղեկատու, տեղանունների և անձնանունների ցանկեր։

Հայ ժողովրդի պատմության V հատորը գրված է պատմության դիալեկտիկական մատերիալիստական ըմբռնմամբ և խոշոր ներդրում է հայագիտության մեջ։

Ս. Խ. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու